



روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی



«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի և հիւսիսային իրանահայրենական պատգամաւոր Արա Շահվերդեանը այցելել է Թեհրանում ընթացող Իրանի ՁԼՄ-ների 24-րդ ցուցահանդէսին:

«Մեք» լրատուական գործակալու-

Պատգամաւոր Արա Շահվերդեան. «ԻՐԱՆԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

թեան տաղաւարում պատգամաւորի հետ հարցազրոյցի ընթացքում, Արա Շահվերդեանը անդրադարձաւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին ժողովրդի մասնակցութեան անհրաժեշտութեանը նշել է, որ մասնակցութեամբ է հնարատար արծարծել խնդիրները և դժարութիւնները: Նա զրոյցի ընթացքում կարեւորութեամբ է անդրադարձել 11-րդ նստաշրջանի խորհրդարանի կողմից հաստատուած մի շարք նախագծերին, կարեւորելով՝ կա-

ռավարութեան բնակարանաշինութեան և շինարարական նախագծերը: Պատգամաւորի հետ հարցազրոյց են ունեցել նաեւ ԻՄՍԱ-ն, «Շաֆաղնա» լրատուական գործակալութիւնը, «Իոնիայէ Էդթեսապ»-ը, «Աֆքար նիզ»-ը և «Հայաթ»-ը: Հարցազրոյցների ընթացքում պատգամաւորը շեշտել է, որ Իսլամական խորհրդարանի 12-րդ շրջանի ընտրութիւններին իրանահայրենիքը, ինչպէս միշտ գիտակցաբար մասնակցելու է:

«ԱԼԻՔ»-ը՝ Իրանի ՁԼՄ-ների 24-րդ մամլոյ ցուցահանդէսում

«ԱԼԻՔ», Կ.Դ. - Թաւանկա փետրարի 18-ին Թեհրանի «Իմամ Նոմէյնի մուսալա»-ում իր աշխատանքը սկսեց Իրանի ՁԼՄ-ների 24-րդ ցուցահանդէսը, որը ավարտուելու է վաղը՝ փետրարի 22-ին: Մամուլի ընտանիքի ցուցահանդէսին, այս տարի իր մասնակցութիւնն է բերել նաեւ «ԱԼԻՔ» օրաթերթը, որն իրեն յատկացած տաղաւարում ներկայացրել է թերթիս անցեալի և ներկայի մասին պատմող նիւթեր, ինչպէս նաեւ հաստատութեան հրատարակչական աշխատանքներից օրինակներ:

Ցուցահանդէսի կայացման օրերին «ԱԼԻՔ»-ի տաղաւար են այցելել հասարակական ու քաղաքական տարբեր դէմքեր և զանազան լրատուամիջոցների լրագրողներ:

Երեկ փետրարի 20-ի առաւօտեան Իսլամական խորհրդարանում Թեհրանի և հիւսիսային իրանահայրենական պատգամաւոր Արա Շահվերդեանը այցելել է «ԱԼԻՔ»-ի տաղաւար: Այցի ընթացքում, պատգամաւորի հետ ունեցած զրոյցում, նա կարեւորութեամբ անդրադարձաւ մամուլի, գրքի և նմանօրինակ ցուցահանդէսներին իրանահայրենական մասնակցութեան անհրաժեշտութեանը և իր գնահատանքը յայտնեց «ԱԼԻՔ»-ի տաղաւարի գծով:

«ԱԼԻՔ»-ի տաղաւար այցելել է նաեւ Հանրապետութեան նախագահի գործադիր հարցերով տեղակալ Մոհսեն Մանսուրին, գրասալոյցութեան, մշակութային ժառանգութեան և ձեռարկեստի նախարարութեան խորհրդարանական հարցերով գերատեսուչ ղոկտ. Մոհամադ Քարիմին, ներքին լրատուամիջոցների և մամուլի գերատեսչութեան մշակութային հարցերով տեղակալ ղոկտ. Մորուչը, Իսլամական խորհրդարանի նախագահ Մոհամադ Բադեր Ղալիբաֆի խորհրդակցանք, Կովկասի և տարածաշրջանի հարցերով փորձագէտներ՝ Ալիոնեզա Դամանանդին, Էհսան Մովահեդեանը, և բազմաթիւ լրատուամիջոցների ներկայացուցիչներ:



Լուսանկարները՝ ԳՍՏԻՄ

ԻՅՊԿ ցամաքային ուժերի զինանոցը յարձակողական գործողութիւնների համար համալրւել է ԱԹՍ-ներով



«ԱԼԻՔ» - Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի (ԻՅՊԿ) ցամաքային զորքերի զինանոցը համալրւել է հայրենական արտադրութեան երկու անօդայն թռչող սարքերով, որոնք օգտագործուում են յարձակման և մարտական գործողութիւնների նպատակով: Յայտնուում է «Թասնիխ»-ը:


Դրանք կամակաճ «Շահեդ-131» և «Աբաթի-5» մարտական անօդայն թռչող սարքերն են: «Շահեդ-131»-ի երկարութիւնը 2.6 մետր է, բաշը՝ 135 կգ. այն կարող է պայթեցնել թիրախները 900

կմ. շառաւղով: Հայրենական արտադրութեան ԱԹՍ-ն առաջատար դեր է խաղացել ԻՅՊԿ-ի իրականացրած գորակարծութիւններում, որոնց ընթացքում Դիմնում գտնուող իսրայէլական միջուկային ռէակտորի վրայ ճշգրիտ յարձակում իրականացնելու վարժանքներ են իրականացւել:

«Շահեդ-131»-ն օգտագործւել է Իրաքի հիւսիսում Քոդստանի տարածքում իրականացած գործողութիւններում:

Իրանագետը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում. «Կարելոր է հայ-իրանական յարաբերութիւնների մէջ անվտանգային բաղադրիչը, նկատի առնելով Սիւնիքի շուրջ ստեղծուած իրավիճակը» (Տես 2-րդ էջում)





ՅԱՆՈՒՆ
 ԱՆԿՏԱՆԳ ԵՒ ՀՁՕՐ
 ԻՐԱՆԻ

Միասին
 մասնակցենք
 Մարտի 1-ի
 (11 Ասֆնդ)
 ընտրութիւններին



co f f e e

ԱՐԱՄ

فروشيگاه مرکزی:
 قائم مقام فراهانی-شماره ٥٣٤
 88303478 ԵՒ 88308730
 www.aramcoffee.com
 instagram:aram_coffee



Տեառնընդառաջի նախատեսակը՝ Նոր Ջուղայի եկեղեցիներում Տեառնընդառաջի առիթով՝ թեմակալ առաջնորդի ԵԼ ազգային մարմինների ամենամեայ հանդիպումը՝ նորասպակների ԵԼ նորածինների ու նրանց ծնողների հետ



40-օրեայ մանուկ Յիսուսի տաճարին ընծայման տօնի՝ Տեառնընդառաջի նախօրեին՝ փետրվարի 13-ի երեկոյան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ, Ս. Մինաս, Ս. Ստեփանոս և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում տեղի ունեցավ ժամերգություն, որի ասարտին կատարեց մանուկների տաճար ընծայումը, սովորի օրհնության կարգը և ասանդակյան խարտիկի բոցավառումը:

Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու արարողությունն իրականացրեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Միսիակյանը:

Ասարտին եկեղեցու բակում, պատկան թաղի նորասպակ գոյգերի միջոցով, եկեղեցու Ս. Խորանից վառված կրակով բոցավառեց ասանդակյան խարտիկը որպես Գրիստոսի մաքրամաքուր լույսի խորհրդանշան:

Նոյն օրը երեկոյան ժամը 19:00-ին, նախաձեռնությամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի և կազմակերպությամբ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցաց վարչության, Նոր Ջուղայի Հայ Մ. Ս. «Արարատ» միության դահլիճում տեղի ունեցավ ամենամեայ կարգով կազմակերպվող նորասպակների և նորածինների ու իրենց ծնողների հանդիպումը Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Միսիակյանի կողմից:

նի և ազգային մարմինների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը ներկայ էին ՄՊՀ Պատգամավորական ժողովի, Թեմական և Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, հոգևորականաց դասը և Եկեղեցաց վարչության անդամները:

Երեկոն սկիզբ առավ հանդիսավար Մանիա Ղուկասեանի ողջոյնի և շնորհատրանքի խօսքերով, որից յետոյ արտայայտեցին Կրօնական խորհրդի ատենապետ Ջալեն Միսիակյանը, Պատգամավորական ժողովի ատենապետ՝ Նոյն Միսիակյանը և թեմակալ առաջնորդ Տեր Միսիակյանը:

Ջալեն Միսիակյանը շնորհատրանքի խօսքեր ասելով հրապարակաբար նորասպակ գոյգերին մաղթեց անասանման սեր ու երջանկություն:

Նոյն Միսիակյանը անդրադարձավ կատարեց այն հանգամանքին, որ նորասպակ գոյգերը ընտանիք կազմելով աւելացրել են մեր համայնքի ընտանիքների թիւը: «Ազգային մարմիններն իրենց ունեցած հնարաւորութիւնների սահմաններում, կարող են Ձեզ օգտակար լինել: Նաեւ այստեղից յայտարարում եմ, որ եթէ ինչ որ ուղրտում կարող եմ Ձեզ օժանդակել, մենք դա կանենք սիրով: Մաղթում եմ փայլուն ապագայ և միասնական ընտանիք», յաւելեց նա:

Թեմակալ առաջնորդն անդրադարձավ պսակի խորհրդին կարեւորութեամբ նշեց. «Երբ տեսնում եմ նորասպակներ, տեսնում եմ զոյգեր, որոնք իրենց մոռացած, ամբողջ ուշադրութիւնը և կենտրոնացումը ընծայում են իրենց կողակցին, իսկ երբ մանուկ է ծնում, ոչ միայն մոռանում են իրենք իրենց, այլև մոռանում են իրենց կողակցին և ամբողջությամբ ուշադրութիւնը սեւեռում երեխայի վրայ: Սակայն անհրաժեշտ է, առաջինը՝ չնոռանաք Ձեր կողակցներին, ինչքան էլ Ձեր ուշադրութիւնը կենտրոնացնէք Ձեր երեխաների վրայ: Երկրորդ՝ չնոռանաք, որ Ձեր երեխաները, որոնք Աստուծոյ տաճար օրհնութիւններն են և մարմնատուրած հրեշտակներ, մնալու չեն և հիւր են Ձեր տանը: Ոչ մի ընտանիքի մէջ, ոչ մի գոյգի միջեւ երեխան չպիտի կուրի ու վիճաբանութեան առարկայ դառնայ, այլ ընդհակառակը՝ միութեան ու հասկացողութեան առիթ պիտի լինի»: Մըրբազան Հայրն իր խօսքն ասարտեց օրհնութիւններով ու շնորհատրանքներով:

Նշելի է, որ երեկոյի ընթացքում բոլոր նորասպակներին և նորածիններին ներկայացրեցին դրամական և ներքին: **Թղթակից (Նոր Ջուղա)**

Տաւուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ արք. Գալստանեանի այցը՝ ազգային առաջնորդարան



Հինգշաբթի, փետրարի 15-ին, Թեմի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, իր գրասենեակում հիւրընկալեց Տաւուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ արք. Գալստանեանին, ով Թեմի և Ժամանակ մասնակցելու ՀՈՒՄԿ հաստատութեան նախաձեռնությամբ կազմակերպւած «Հայ Դատն այսօր» 15-րդ խորհրդաժողովին:

Մըրբազան Հայրը ջերմօրէն ողջունեց և իր ուրախութիւնը յայտ-

նեց հանդիպման առիթի կապակցութեամբ:

Ջրոյցի ընթացքում ընդհանուր անդրադարձ կատարեց Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակին և խորհրդաժողովի օրակարգերին: Մըրբազան Հայրը անդրադարձ ունեցաւ նաեւ համայնքի եկեղեցական և ազգային կեանքին:

Ազգային առաջնորդարանի Դանիալի կապի գրասենեակ

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը ընդունեց 8-րդ քաղաքամասի քաղաքապետին




Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թարիգ-Շարաթ, փետրարի 17-ի կէտօրին, Թարիգի 8-րդ քաղաքամասի քաղաքապետ զոկտ. Մոնիրիֆարը, ընկերակցութեամբ իր խորհրդականներին այցելեց ազգային առաջնորդարան, և հանդիպում ունեցաւ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր արք. Չիֆթեանի հետ: Սոյն հանդիպմանը ներկայ գտնուեցին Թեմական խորհրդի ատենապետ Գազիկ Ջորջեանը, փոխատենապետ Ալէն Սայեադեանը և առաջնորդարանի կալաւածային բաժանմունքի խորհրդատուն:

Ազգային առաջնորդարանի «Էմիլ Յակոբեան» դահլիճում ընդունելով հիւրերին, Մըրբազան Հայրը բարձր գնահատեց 8-րդ քաղաքամասի քաղաքապետների հոգածու վերաբերմունքը ազգային առաջնորդարանի կալաւածային տարածքի և նոյն քաղաքամասում դրա ունեցած կալաւածների նկատմամբ: «Նախկին քաղաքապետը մեր փորձի յատկը քարապատեց, որը աւելի շքեղութիւն տեց պաշտօնական այս յարկին մեր համայնքի կենտրոնին, որտեղ բազմաթիւ հիւրեր և այցելուներ են ունենում», - ասաց Մըրբազան Հայրը, յոյս յայտնելով, որ նոյն հոգածութիւնը շարունակելու է միշտ: Բարաբարապետ զոկտ. Մոնիրիֆարը

անձնապէս իր և իր ղեկավարած քաղաքապետարանի անձնակազմի պատրաստակամութիւնը յայտնեց Թեմական խորհրդին և թեմի շինարարական կազմին, ազգային առաջնորդարանի կալաւածային խնդիրների հեզասան ընթացքին և շինարարական ծրագրերին աջակցելու: Այնուհետև մանրամասն ընտրութեան առաջիկայ աշխատանքները, յատկապէս տարեկանից առաջ ասարտելու արտօնագրային պաշտօնական գրառումները: Այս մասին յայն տեղեկութիւնները փոխանցեցին հիւրերին Գազիկ Ջորջեանը, Ալէն Սայեադեանը և կալաւածային բաժին խորհրդատուն:

Հանդիպման ասարտին, հիւրերը առիթ ունեցան շրջապայելու ազգային առաջնորդարանի այգում, տեսնելով ցարդ կատարած շինարարական աշխատանքները և առաջիկային իրագործելիք վերանորոգութիւնները: Նրանք նաեւ այցելեցին «Ռոստոմ Գասպար» գրադարանը, իրենց հիացմունքը յայտնելով վերանորոգութեան այն հակապայան աշխատանքի համար, որը իրագործել էր գրադարանում: Հիւրերը ծանօթացան հին և նոր հրատարակութիւններին, հայ մանուկան, որը այնքան բժախնորութեամբ կազմուել ու պահպանուել է գրադարանում:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԱՐԻՒՆԻ ԲԱՆԿԱՅԵԱՆՑԻ (ՍՏԵՓԱՆԵԱՆ) ՄԱՐՏ 1-ԻՆ


ՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ

Անալիկ Մուսախանեանը (Վարդանեան), Մեան և Նալիբի Մուսախանեանները, Անահիպ և Միեր Անդրեասեանները իրենց շար սիրելի և թանկագին՝ եղբոր և մորեղբոր՝

ԳԱՌՆԻԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ՝ ծաղկեպսակի փոխարէն 50.000.000 ռիալ նւիրապուովուն են կարարել Թ. Ն. Թ. Կարիբաւորներին օժանդակող մարմնին:

Գումարը յանձնուել է:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Խոր վշտով համակամ յայտնում ենք, որ մեր շար սիրելի և թանկագին՝



ՍԻԼՄԱ ԽԱԼԱՑԵԱՆՑԻ (ՍՏԵՓԱՆԵԱՆ)

ցաւալի մահուան բաժանօրեակի առթիւ՝ ուրբաթ, փետրուարի 23-ին, Ս. Մարգիս եկեղեցում, ս. պարարագից յետոյ կը կարարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Մարօ, Աննիա և Ռենիա Մարտիանեաններ՝ որդին, հարսը և թոռը:

Մելինէ և Առլէն Յովսէփեաններ՝ դուստրը և փեսան:

Յասմիկ և Ալէք Սիմոնեաններ՝ թոյրը և իր ամուսինը՝ ընկերներ:

Ռազմիկ և Բելլա Խալաֆեանցներ՝ եղբայրը և իր կինը՝ ընկերներ:

Գրեպա և Ռազմիկ Կարապետեաններ՝ թոյրը և իր ամուսինը՝ ընկերներ:

Կարինէ, Մասուն, Ադրինէ և Ալֆրէդ Մանուկեաններ՝ փայր՝ ընկերներ:

Ռաշէ և Անդրէ Գրիգորեաններ՝ ընկերներ:

Միշէ և Մելիսա Սիմոնեաններ՝ ընկերներ:

Ռուբիկ և Վիոլետ Յարութիւնեաններ՝ խնամին՝ ընկերներ:

Մերժիկ և Դիանա Յովսէփեաններ՝ խնամին՝ ընկերներ:

Մարտիանեան, Խալաֆեանց, Սիմոնեան, Մարգարեան և Աւագեան ընկերները՝ հարազատները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Խոր վշտով համակամ յայտնում ենք, որ մեր շար սիրելի և թանկագին՝



ՎԱԶԳԱՆՈՒՇ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ (ԳԷՈՐԳԵԱՆ)

ցաւալի մահուան առաջին փարելիցի առթիւ՝ ուրբաթ, փետրուարի 23-ին, Ս. Մարգիս եկեղեցում, ս. պարարագից յետոյ կը կարարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Փոլին, Ալֆրէդ, Փարթիկ, Լիանա և Աննա Շահնազարեաններ՝ դուստրը, փեսան և թոռները:

Փաօլա Մուրադեան՝ դուստրը:

ԱԼԻՔ

Օրաթերթ

Արտօնատեր՝ ԱԼԻՔՆԵՐ ԱԾԵՍԵԱՆ Գեոպոլիտ (0098-21) 88768567 - 88761154 Գեոպոլիտ 88760994 Փոստարկը՝ 11365-953 Թեհրան - Իրան

روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
آلیک
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان شهر وردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۱۱۳۶۵-۹۵۳
فکس: ۸۸۷۶۰۹۹۴
چاپخانه آلیک
تلفن: ۸۸۷۶۸۵۶۷ - ۸۸۷۶۱۱۵۴

ALIK ARMENIAN DAILY

Addr.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave., Tehran 15588339 11, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 - 8876 1154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
ԼԻԱՅԵՐ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՅՈՂ
ՄԵԵՆԱՆԵՐԻ ՆՈՐԴՈՂՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Նեռ. 26320084 և 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

«Ալիք» օրաթերթի խմբագրութիւնը, փնտրելու իրենց խորագրաց ցաւակցութիւններն են յայտնում՝ օրաթերթիս պաշտօնեայ՝ Մեան և Նալիբի Մուսախանեաններին, Մուսախանեան և Վարդանեան ընկերներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր և անփոխարինելի կորստի՝


ԳԱՌՆԻԿ

ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Խոր վշտով համակամ յայտնում ենք, որ մեր շար սիրելի և թանկագին՝



ԼԵՒՆ ՂԱՐԱԽԱՆԵԱՆ ՍԻՐԱԲԻԻ

ցաւալի մահուան առաջին փարելիցի առթիւ՝ ուրբաթ, փետրուարի 23-ին, Ս. Մարգիս եկեղեցում, ս. պարարագից յետոյ կը կարարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Ղարախանեան, Բաղրամեան, Աբրամեան, Անտոնեան, Ղազարեան, Բարախանի, Մոնթիէր և Շերոյեան ընկերները՝ հարազատները:

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

شرکت خدمات مسافرت هوایی و جہانگردی
هفت ستاره آسمان آفتابی

صدور بلیط خطوط هواییابی

کلیه خدمات گردشگری

رزرواسیون هتل ها

میدان ونک، خیابان گاندی جنوبی، کوچه بیست و سوم، پلاک ۱۹، ساختمان یاس، واحد ۲۰۱

☎ ۰۹۳۰ ۳۸۱ ۰۶۲۵

☎ ۰۲۱ - ۸۸ ۷۹ ۶۷ ۴۲ - ۳

